

## ՎՐԱՍՏԱՆ-ՈՒԿՐԱԻՆԱ

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԷՐ

Հունիսի 2-4-ը, պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Ուկրաինայի վարչապետ Դենիս Շմիգալը:

Այցի շրջանակներում, ուկրաինացի հյուրը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի, ինչպես նաև Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ: Դենիս Շմիգալը, պատվիրակության անդամների հետ միասին, հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի միասնության համար զոհված հերոսների հիշատակին եւ ծաղկեպսակով զարդարեց Հերոսների հրապարակում գտնվող հուշահամալիրը:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԱ

### ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴԻՅԱԼ



Պաշտոնական այցի մեկնարկին Իրակլի Դարիբաշվիլին այ-

Հունիսի 1-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, մեկօրյա պաշտոնական այցով, գտնվում էր Թուրքիայում: Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

ցելեց Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի դամբարան ծաղկեպսակ դնելով նրա շիրմին: Բարձր մակարդակի հանդիպմանը կողմնակցեցին երկրորդ հետաքրքրություններ կարգադրող հարցեր,

անդրադարձան տարածաշրջանային անվտանգության թեմային: Բանակցությունների ավարտին հաջորդած համատեղ մամուլ ասուլիսին, Թուրքիայի նախագահը նշեց, որ 14 տարվա ընթացքում Թուրքիան համարվում է Վրաստանի թիվ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## COVID - 19

### ՃԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԲԱՅՎԵՅԻՆ, ԻՍԿ ՈՐՈՇ ՍԱՀՄԱՆԱԾԱԿՈՒՄՆԵՐ ՄԵՂՄԱՅՎԵՅԻՆ

Վրաստանի կառավարության միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, հունիսի 1-ից Վրաստանի ցամաքային սահմանները բացվեցին, մեղմացվեցին նաև առանձին սահմանափակումներ:

Խորհրդի որոշմամբ, ցամաքային սահմանները կգործեն նույն պայմանակարգով, ինչ մինչ օրս գործում էր օդային սահմանի պարագայում: Մասնավորապես, ցամաքային սահմանը հատել հնարավոր կլինի լիարժեք պատվաստումը հաստատող փաստաթղթով եւ PCR թեստի բացասական պատասխանով, կամ վերջին 72 ժամում անցկացված PCR թեստի բացասական պատասխանով: Երկիր նուստ գործող անձինք պարտավոր կլինեն

երրորդ օրը կրկին անցնել PCR թեստավորում: Բացի այդ, Կանադան, Ճապոնիան, Քուվեյթը, Չինաստանը, Հարավային Կորեան, Մոլդովան եւ Օմանը ավելանում են այն երկրների ցուցակ, որոնց քաղաքացիներն ու բնակիչները կարող են անցնել Վրաստանի սահմանը PCR թեստի բացասական պատասխանով՝ վերջին 72 ժամվա ընթացքում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

## «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

### ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՒՂ, «ՎՐԱՍՏԱՆ»



ԹԵՆ ԾՈՒՆՈՒԿԻԱՆԻ

«Վրաստան» թերթն իր գոյության մեկդարյա ժամանակահատվածում մշակակալի դեր է կատարում մեր երկրի ազգությանը հայ քաղաքացիներին տեղեկատվությամբ ապահովման, երկու երկրների միջև հարաբերությունների ամրացման եւ վրաց ու հայ ժողովուրդների բարեկամության խորացման գործում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

### ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՍ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղբյուրփի գյուղի բնակիչների անունից ի սրտե շնորհավորում են սիրելի «Վրաստան» թերթի խմբագրությանը մեկդարյա հոբելյանի առթիվ, թերթին մաղթում երկարակեցություն, իսկ խմբագրակազմին առողջություն, երջանկություն եւ ստեղծագործական հաջողություններ:

Իր պատմության ընթացքում «Վրաստանը» վիրահայերիս համար արժանի ուղեցույց, խորհրդատու եւ, իհարկե, հայ եւ վրաց ժողովուրդների բազմադարյա բարեկամության ամրացման հուսալի կամուրջ է եղել:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ԳԻՂՈՒ ԱՌԱՔԵԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆ

### «ԱՅՍ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՆ Է»

Հունիսի 1-ին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, աշխատանքային այցով, գտնվում էր Ֆրանսիայում: Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետի պաշտոնակատարը հանդիպումներ ունեցավ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Ռիշար Ֆերանի, Սենատում՝ նախագահ ժեռար Լարշեի հետ: Օրակարգը ավարտվեց Ֆրանսիայում հայ համայնքի ներկայացուցիչների հանդիպմամբ:

Փարիզի ելիսեյան պալատում կայացած հանդիպմանը, Հայաստանի վարչապետի պաշտոնակատարն ու Ֆրանսիայի նախագահը, առանձնազրույցի շրջանակում քննարկեցին ինչպես հայ-ֆրանսիական հարաբերությունների օրակարգային հարցերը, տնտեսության ոլորտում փոխգործակցության ընդլայնման, այնպես էլ՝ Հարավային Կովկասում տեղի ունեցող զարգացումները, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում Լեռնային Ղա-



րաբարի հակամարտության կարգավորմանն ուղղված հետագա քայլերը, հայ-արդրաբանական սահմանին ստեղծված իրավիճակի խաղաղ հանգուցալուծման հնարավորությունները:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

### ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՐԵՒՄՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎՈՒՄ Է

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնությամբ, սոցիալապես անապահով երեխաների օգնությունը հուլիսի 1-ից կրկնապատկվում է եւ ներկայիս 50 լարիի փոխարեն, դառնում 100 լարի: Ավելանում է նաև օգնություն ստացող երեխաների թիվը:

Բացի այդ, գոյություն ունեցող 100 000 միավորի փոխարեն, 120 000 միավորից պակաս ունեցող ընտանիքներում ապրող երեխաները եւս կստանան 100 լարի օգնություն: Այս որոշումը կվերաբերի ավելի քան 215 հազար երեխայի:

Ծրագիրը ֆինանսավորելու համար բյուջեից տարեկան կհատկացվի 145 միլիոն լարի:

## ՎԱՐՂԱՏՈՆ - 2021

### «ՎԱՐՂԱՏՈՆ» ՆՈՐԻՑ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

«Թրիլիսի: Մեյրան: Գորգասալու հրապարակ: Վարդերի բուրմունք: Ծով բազմություն: Տեղացիներ, հյուրեր: Գրողներ, երգիչներ, քաղաքական, հասարակական գործիչներ... Խոսք: Երգ: Պար: Ու... մի մեծ խոնարհում առ Սայաթ-Նովա Բանաստեղծ, Սայաթ-Նովա Երգիչ, Սայաթ-Նովա Իմաստասեր, Սայաթ-Նովա Փիլիսոփա...»: Գրեթե այսպես էր սկսվում մայիս-վերջյան կիրակիին հաջորդած «Վրաստան» թերթի հերթական համարը, որ լուսաբանելու էր թրիլիսիցիներին միավորող ամենաբարի տոնախմբությունը՝ Վարդատունը:



2020... 2021 թվականները, սակայն փոխեցին նաև Վարդատունի ընթացքը: Համավարակը թելադրեց իր պայմանները՝ խախտելով հինը, բայցեւ մոռացության չմատնելու, այն պահպանելու նոր ճանապարհներ ուղեցնելով: Ու թե մայիսի տարի ավելի սուղ, այս տարի քիչ ավելի տոնական դարձավ Վարդատունը՝ իր մեջ առնելով վերականգնումը պատմությանը վերապահվածի:

Ինչպես նշել էինք նախորդ համարում, 107 տարի առաջ, մայիսի 15-ին, Համբարձման օրը, Հովհաննես Թումանյանն իր թրիլիսյան տանը համախմբեց հայ ու վրացի մտավորականներին՝ Գեւորգ Բաշինջաղյանին, Իոսեփ Գրիշաշվիլուն, այլոց: Նրանք ալ վարդերով քաղաքի մեղիկ ու բազմազգ փողոցներով իջան դեպի Սուրբ Գեւորգ եկեղեցի, ճապարակվեցին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄ

ԵՎՐԱՍԻՆՏԵՐՈՒՄԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 1-3-ին Վրաստանում էին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի կոմիտեի անդամները: Պատվիրակության կազմում էին Տիտուս Քորլաթեանը՝ համագեկուցող, Ռումինիայի «Առցիալիստների խումբը», Կլոդ Քեռնը՝ համագեկուցող, Ֆրանսիայի «Լիբերալների և դեմոկրատների դաշինք» Եվրոպայի համար» և Բաս Քլեյնը՝ Եվրոպայի խորհրդարանի մոնիտորինգի կոմիտեի քարտուղարության ղեկավարի տեղակալ:



ԻՏՐԱՅԵԼ ԻՑՅԱԿ ՅԵՐՑՈՂԸ՝ ԵՎՐՈՒ ՆԱԽԱԿԱՐ

Այցի շրջանակներում, Եվրոպայի խորհրդարանականները հանդիպումներ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլու, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի, ինչպես նաև ընդդիմադիր կուսակցությունների նեկայացուցիչների հետ: Վրաստանի վարչապետի և Եվրոպայի խորհրդարանականների հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի սերտ և արդյունավետ համագործակցությունը, Վրաստանում առկա քաղաքական իրավիճակի և առաջիկա տեղական ընտրությունների հարցերը: Նշվեց, որ Վրաստանի իշխանությունը պատրաստ է ապահովել, որ ընտրություններն անցկացվեն ազատ ու արդար միջավայրում, եւ որ մի շարք հեղինակավոր միջազգային դիտորդական կազմակերպություններ արդեն հրավիրվել են ընտրությունների:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց Եվրոպայի խորհրդի մոնիտորինգի կոմիտեի համագեկուցողներին՝ Վրաստանում ժողովրդավարական բարեփոխումներին աջակցելու համար: Քննարկվեց նաև Վրաստանի օկուպացված տարածքներում ստեղծված ծանր իրավիճակը և շեշտվեց Եվրոպայի խորհրդի դերը հակամարտության խաղաղ կարգավորմանն աջակցելու գործում: Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի անդամների հետ հանդիպմանը քննարկվեցին երկրում ընթացիկ քաղաքական գործընթացները: Ուշադրության կենտրոնում էր Շառլ Միշելի փաստաթղթի կատարման կարևորությունը: Այցի շրջանակներում, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի կոմիտեի անդամները հանդիպում ունեցան նաև Վրաստանում գործող ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

ՎՐԱՍՏԱՆ-ՈՒԿՐԱԻՆԱ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՐԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի և Ուկրաինայի վարչապետերի հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի և Ուկրաինայի համար ընդհանուր մարտահրավերները՝

Ռուսաստանի կողմից եկող սպառնալիքները և բռնազավթման ծանր հետևանքները: Կողմերը քննարկեցին նաև Վրաստանի և Ուկրաինայի միջև երկկողմ համագործակցության հիմնական ուղղությունները,

երկու երկրների ինտեգրումը Եվրոպական և Եվրատլանտյան կառույցներին և այդ ուղղությամբ երկկողմ համագործակցության ամրապնդումը: Նշվեց Արեւելյան գործընկերության շրջանակներում երկու երկրների համագործակցության կարևորությունը: Ջրույցում անդրադարձան նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում Վրաստանի և Ուկրաինայի միջև համագործակցությանը:

Այս համատեքստում շատ կարևոր է Ադրբեյջանի հետ եռակողմ համագործակցությունը: Մենք՝ թուրքիան, աջակցում ենք բոլոր եռակողմ համագործակցությանը՝ լինի դա Վրաստան-Ադրբեյջան-Հայաստան կամ Վրաստան-Ադրբեյջան-Թուրքիա»:

ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐԿԻԱ

ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼՈՒՐՋ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեկ առեւտրային գործընկերում ու այդ սերմ ժամանակակից առևտրական միջավայրում 3 միլիարդ դոլարի: «Թուրքիան Վրաստանին տեսնում է որպես տարածաշրջանային համագործակցության բանալի: Մենք հավատում ենք, որ կարող ենք կատարել տարբեր աշխատանքներ, որոնք կամրապնդեն և կխթանեն մեր տարածաշրջանի խաղաղությունը: Այս համատեքստում շատ կարևոր է Ադրբեյջանի հետ եռակողմ համագործակցությունը: Մենք՝ թուրքիան, աջակցում ենք բոլոր եռակողմ համագործակցությանը՝ լինի դա Վրաստան-Ադրբեյջան-Հայաստան կամ Վրաստան-Ադրբեյջան-Թուրքիա»:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին խոսեց ռազմավարական համագործակցության մասին. - Մեր միջև կա շատ ամուր հիմք՝ ավելի շատ ծրագրեր համատեղ իրականացնելու և երկկողմ, եւ եռակողմ ձեռնարկներով հայտարարեց Իրակլի Գաբրիաշվիլին: Նա Երդրդանի շնորհակալություն հայտնեց Եվրատլանտյան կազմակերպություններին ինտեգրվելու և երկրի ինքնիշխանությանն աջակցելու համար, եւ խոսքի վերջում՝ հրավիրեց թբիլիսի: Նշվեց նաև, որ որոշվել է ռազմավարական գերագույն խորհրդի նիստ անցկացնել:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎԵՐՍԿՍԵՅԻՆ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱԴԱԽԼՈՒՄԱՆ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ, ՆԻՆՈՇՄԻՆԴԱ-ԲԱՎՐԱ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՅԱԿԵՏԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 1-ից օտարերկրացիների համար Վրաստանի ցամաքային սահմանները բացվել են: Ընդ որում, Վրաստան-Հայաստան սահմանագծում աշխատանքը վերսկսել են Սադախյուր-Բագրատաշեն և Նինոծմինդա-Բավրա անցակետերը: Անցակետերը բաց կլինեն ամեն օր՝ ժամը 10:00-20:00 ընկած ժամանակահատվածում:

Հայաստանի քաղաքացիները Վրաստան կկարողանան մուտք գործել վերջին 72 ժամվա ընթացքում արված PCR թեստի բացասական պատասխանի առկայության կամ պատվաստման ամբողջ կուրսն (երկու դեղաչափ) անցնելու և միաժամանակ PCR թեստի բացասական պատասխանի առկայության դեպքում: Միայն PCR թեստով Վրաստան ժամանած քաղաքացիները պարտավոր են երկիր մուտք գործելուց հետո 72 ժամվա ընթացքում ևս մեկ թեստ հանձնել, իսկ պատվաստման ամբողջ կուրսն անցած քաղաքացիները ժամանելուց հետո թեստ հանձնելու անհրաժեշտություն չունեն:

Ինչ վերաբերում է Վրաստանի քաղաքացիներին, ապա Վրաստանի կառավարության մասն ծառայության կողմից տարածած տեղեկատվության համաձայն, վրաց-հայկական սահմանը արդեն առանց բուլլետիայան կարող են հատել նաև Վրաստանի քաղաքացիները: «Այս պահի դրությամբ, Հայաստանն արդեն ընդունում է Վրաստանի քաղաքացիներին: Սահմանը Վրաստանի քաղաքացիների համար բաց է և առանց արգելք կարող են հատել այն բավարարելով Հայաստանի կողմից սահմանված հատուկ պայմանները՝ կապված թեստի և այլ կարգավորումների հետ», - ասված է հաղորդագրության մեջ:


ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵՎԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ Ե



ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍԻՐԵԼԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ-ԲՈԼՈՐ ՓՈՔՐԻԿՆԵՐ

Թբիլիսիի ՊԱՊԱՄ-յանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան Սերգո Սաֆարյանը տիկնոջ՝ Ժամնա Մկրտչյանի հետ այլևս մեծ շուքով են տոնելու Հունիսի 1-ը: Որովհետև նրանց հրաշամանուկ Եվան է ծնվել: Երիտասարդ ընտանիքի առաջնեկը լույս աշխարհ է եկել տոնի նախօրեին՝ երջանկության մոր աղբյուր, երագանքներ, նպատակ, ծրագրեր, պարտականություն, պատասխանատվություն ու անճակարեւորը՝ Մայրիկի ու Հայրիկի դերեր պարզելու... Սերգո Սաֆարյանը մեր թատրոնի առաջատար դերասաններից է, որ հայտնի է նաև Վրաստանի և Հայաստանի հեռուստաէկրաններից՝ նկարահանվելով «Մթավարի» հեռուստաընկերության «Դիդի օջախի» հեռուստասերիալում և ֆրանսիացի ճանաչված ռեժիսոր Լեւոն Մինասյանի «Բրավո, վիրտուոզ» հայ-ֆրանսիական կինոնկարում: «Իրականության իմ լիարժեք ընկալման մեջ, Եվան անիրական հրաշք է, ասել ու սահմանափակվել միայն

նրանով, որ նա անենագեղեցիկն է կամ ես նրան շատ եմ սիրում, քիչ կլինի, քանի որ այս պահին զգում եմ այն, ինչ երբեք էլ չեմ զգացել», - ասում է Սերգոն: Բեմին ընդամենը մեկ անգամ է հոր դեր ստանձնել՝ Մարկ-Ժիլբեր Սովաժոնի «Չառ» պիեսում: Կյանքը, բնականաբար, այլ է ու անճակարեւոր, ավելացնում է Սերգոն, այստեղ պատասխանատվություն կա... Սիրելի Եվա ու աշխարհի բոլոր-բոլոր փոքրիկներ, ձեզ անմապ ու խաղաղ երկինք, ամուր առողջություն մանկությունը վայելելու և զգալու, իսկ մեզ՝ մեծերիս ՊԱՍՏԱՆԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆ ձեր մանկության հեքիաթն ապահովելու համար:



ԻՏՐԱՅԵԼ ԻՑՅԱԿ ՅԵՐՑՈՂԸ՝ ԵՎՐՈՒ ՆԱԽԱԿԱՐ

ԻՑՅԱԿ ՅԵՐՑՈՂԸ՝ ԵՎՐՈՒ ՆԱԽԱԿԱՐ

Հունիսի 2-ին Իսրայելի համար հրեական գործակալության «Սոհնուտ»-ի ղեկավար Իցհակ Յերցոզը Կնեսետի (խորհրդարանի) լիազուարմիստում ընտրվեց հրեական պետության 11-րդ նախագահ:

Յերցոզի օգտին առաջին փուլում քվեարկել է 120 պատգամավորներից 87-ը՝ հաղթանակի համար անհրաժեշտ 61 նվազագույնի դեպքում: Նախագահի պաշտոնում Յերցոզը Ռեուվեն Ռիվլինին կփոխարինի հուլիսի առաջին տասնօրյակի վերջում:

ԲԵԼԱՌՈՒՍ

ՊԱՏԱՍԽԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ ԱՄՆ-Ի ԴԵՄ

Բելառուսի Արտաքին գործերի նախարարությունը Վաշինգտոնին տեղեկացրել է ամերիկյան պատժամիջոցների դեմ պատասխան միջոցներ սահմանելու մասին:

Նշվում է, որ Մինսկը որպես պատասխան միջոց կրճատել է ԱՄՆ դիվանագիտական առաքելության անձնակազմը: Բացի այդ, սահմանափակվում է ամերիկացի մասնագետների աշխատանքը և հետ է կանչվում Բելառուսում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աշխատանքի մասին որոշումը:

Պիշեցնենք, որ մայիսի 29-ին ԱՄՆ-ը հայտարարել էր օդային հաղորդակցության մասին Բելառուսի հետ միջկառավարական համաձայնագրի գործողությունների դադարեցման մասին, ինչպես նաև 9 բելառուսական կազմակերպության դեմ պատժամիջոցներ սահմանելու մասին: Ամերիկյան պատժամիջոցները պայմանավորված են մայիսի 23-ին Ryanair ավիաընկերության օդանավի հետ կապված միջադեպով, երբ այն հարկադիր վայրէջք էր կատարել Մինսկում, որից հետո օդանավակայանում ձերբակալվել էր ուղևորների մեջ գտնվող ընդդիմադիր լրագրող Ռոման Պրոտասևիչը:

ԵՍ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Եվրամիության խորհուրդը վերափոխել է այն երրորդ երկրների ցուցակը, որոնց հետ միության պետությունները կարող են բացել արտաքին սահմանները COVID-19-ի տարածման հետ կապված իրադրության բարելավման առնչությամբ, դրա մեջ մտցրել են ճապոնիան: Ռուսաստանին և ԱՄՆ-ին առայժմ այդ ցուցակի մեջ չեն ավելացնում:

Ներկա դրությամբ, փաստաթղթում տեղ են գտել Ավստրալիան, Իսրայելը, Նոր Զելանդիան, Ռուանդան, Սինգապուրը, Հարավային Կորեան, Թաիլանդը և Չինաստանը: Այժմ Եվրամիությունում կազմում են այն երրորդ երկրների ցուցակը, որոնց հետ հանձնարարված է բացել սահմանները:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆՊԱԿԱՆ


ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ՎՐԱՍԱՆԻ ՈՍՏԻԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը մայիսի 31-ին նշեց «Ոստիկանության օրը»: Ներքին գործերի նախարարության վարչական շենքի մոտ կայացած հանդիսավոր միջոցառումը բացեց Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրիին:



Ներկա էին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանի կառավարության եւ խորհրդարանի անդամներ: Նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Կրաստանի նախագահը երեք ոստիկանի պարգևատրեց Պատվո շքանշանով՝ Էկա Բուցխրիկիձեին, Անի Նացարաշվիլին եւ Գվանցա Գոգավային: Միջոցառման ընթացքում, հատուկ վաստակի համար, անձամբ պարգևատրվեցին նաեւ մի քանի աշխատակիցներ, որոնց մրցանակ հանձնեց Վախթանգ Գոմելաուրին:



ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՍԱՄԵԳՐԵԼՈՋԵՍՈՒ ՍՎԱՆԹԻԻ ԵՎ ՇԻՂԱ ՔԱՐՔԻԻ ՆՈՐ ՆԱՅԱՆՎԱԿԵՏԵՐԸ

Մայիսի 31-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կառավարության նիստում ներկայացրեց Սամեգրելո-Ջեմո Սվանթիի եւ Շիղա Քարթլիի նոր նահանգապետերին:

Նրա խոսքով, Գիորգի Գուգուչիան նշանակվել է Սամեգրելո-Ջեմո Սվանթիի, իսկ Վալերիան Մժեղիձեն Շիղա Քարթլիի նահանգապետ:

ՕՐԵՆԱԴԻՐ

«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ



ՅՈՒՑԱՍՅԱՆ ԲՈՅԿՈՏՆ ԿԱՐՏՎԵՑ

Մայիսի 30-ին ավարտվեց խորհրդարանի յոթամսյա բոյկոտը, Միասնական ազգային շարժման քաղաքական խորհուրդը որոշում ընդունեց՝ վերցնել խորհրդարանական մանդատները եւ մտնել խորհրդարան: Հատկանշական է, որ նման որոշմանը զուգընթաց, քաղխորհուրդը նշել է, որ «Ազգային շարժում» կուսակցությունը հրաժարվում է ստորագրել իշխանություն-ընդդիմություն հաշտեցման, Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ ձեւակերպած համաձայնագիրը:

Քաղխորհրդի նիստին երկիրը չէ, որտեղ ընտրություններին իշխանության ղեկի մոտ գտնվող թիմը կարող է իրեն թույլ տալ անօրինական գործողություններ:

- Մենք տվյալ պահի համար ընդունեցինք ճիշտ որոշում, պայքարը կշարունակենք բոլոր ուղղություններով, լինի դա խորհրդարանի դահլիճը, խորհրդարանական կոմիտեի նիստերը, Աջարիայի Գերագույն խորհրդի դահլիճը, քաղաքային իրապարակները, փողոցները, գյուղերը,- հայտարարեց Նիկա Մելիան:

Նախորդել էին հանդիպումներ՝ կուսակցության տարածաշրջանային կազմակերպության ներկայացուցիչների հետ:

Մեկնաբանելով կուսակցության քաղխորհրդի որոշումը, «Ազգային շարժման» նախագահ Նիկա Մելիան հայտարարեց, որ իրենք վրաց հասարակայնությանը եւ միջազգային հանրությանը ցույց տվեցին, որ Վրաստանն այն

ԻՐԱՎԻ ԿՈՒՐՍԻՑԵ. «ՈՎ ԴԵՄ Է ՇԱՌՆ ՄԻՇԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ, ՉՊԵՏՔ Է ՕԳՏՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ...»

Մեկնաբանելով առանց Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ ձեւակերպած փաստաթղթի ստորագրման, խորհրդարանական մանդատները վերցնելու մասին «Ազգային շարժման» որոշումը, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ յուրաքանչյուրն, ով դեմ է փաստաթղթին, չպետք է օգտվի այս փաստաթղթի արտոնություններից:

- Մեզ համար հիմնական ելակետը պետք է լինի Շառլ Միշելի փաստաթուղթը: Փաստաթղթում ասված է մի պարզ բան, համաձայնումն օրենքը պետք է վերաբերի բոլորին: Այն պետք է սկզբունքորեն տարածվեր բոլոր անձանց վրա, ինչն ամրացված է մեր փաստաթղթում: Եթե ինչ-որ մեկը սկզբունքորեն դեմ է եվրամիությանը, Միշելի համաձայնագիրն եւ համաձայնագրի օրինագծին, ապա տրամաբանական է, որ նրան չպետք է վերաբերի համաձայնագրի նախագիծը: Սա մի պարզ սկզբունք է, որը բխում է Միշելի փաստաթղթից: Յուրաքանչյուրն, ով դեմ է Միշելի փաստաթղթին, չպետք է օգտ-

վի այս փաստաթղթի արտոնությունից, ասաց Իրակլի Կոբախիձեն:

Նրա խոսքով, «Ազգային շարժումը» անարգալից վերաբերմունք ցուցաբերեց Եվրոպական կառույցների նկատմամբ՝ չստորագրելով Շառլ Միշելի փաստաթուղթը:

«Ազգային շարժումը» անարգալից վերաբերմունք է ցուցաբերում Եվրամիության եւ Եվրոպական կառույցների նկատմամբ: Սա բացարձակապես անընդունելի է: Հիշեցեք, որ երբ Շառլ Միշելը ժամանեց Թբիլիսի, նույնիսկ այդ ժամանակ նրանք չստորագրեցին փաստաթուղթը, չնասնակցեցին հանդիպմանը, ինչը ցույց

է տալիս նրան ցընդհանուր վերաբերմունքը արեւմտյան ինստիտուտների, Եվրամիության նկատմամբ: Այս անարգալից վերաբերմունքն անընդունելի է եւ պատշաճ արձագանքի կարիք ունի ինչպես միջազգային գործընկերների, այնպես էլ մեր կողմից: Մենք պետք է մեր երկրում պաշտպանենք արեւմտյան ինստիտուտների հեղինակությունը, ինչը նաեւ մեր պարտականությունն է, եւ մենք դա կանենք», - ասաց Կոբախիձեն:



ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է, ԴՈՒՐԱՐԸ՝ ԱՐԺԵԶՐԿՎՈՒՄ

Վրաստանի Ազգային բանկի իրապարակած տվյալների համաձայն՝ մեկ ամերիկյան դոլարի փոխարժեքը 3.07-3.10 լարի է:

Նախկին փոխարժեքը 3.2688 լարի էր մեկ դոլարի դիմաց: Լարիի պաշտոնական փոխանակման փոխարժեքը դոլարի համեմատ կազմել է 0.0141 լարի:

Ինչ վերաբերում է եվրոյին, ապա դրանոր փոխարժեքը 3.9792 լարի է: Նախկին փոխարժեքը կազմել է 3.9843 լարի: Լարիի համեմատ եվրոյի պաշտոնական փոխանակման փոխարժեքը կազմել է 0.0051 լարի:



ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱՅԻ «ՀԱՆՈՒՆ ՎՐԱՍԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՎԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Մայիսի 29-ին ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցահանդեսների պատկերասրահներից մեկում անցկացվեց «Հանուն Վրաստանի» քաղաքական միավորման ներկայացման շնորհանդեսը: Քաղաքական նոր միավորման շնորհանդեսին միավորման նախագահ ընտրվեց Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Գախարիան: Հատկանշական է, որ Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Գախարիան, նորաստեղծ կուսակցությամբ, պատրաստվում է պայքարել իր նախկին թիմի դեմ:

- Մենք միավորվում ենք Վրաստանի համար, սակայն ոչ մեկի դեմ չենք գործելու: Մեր գլխավոր նպատակն է, որ այս երկրում վերջ տանք արմատականությանը: Ինձ եւ իմ ընկերների համար բացարձակ էական չէ, թե որտեղից է գալիս այս արմատականությունը: Այսօր մեր գլխավոր խնդիրը թույլ ինստիտուտներն են, կոռուպցիան, նեպոտիզմը: Երկրի ամենագլխավոր խնդիրը արագ տնտեսական զարգացումն է,- ընդգծեց Գիորգի Գախարիան:

Նշենք, որ Վրաստանի նախկին վարչապետ Գիորգի Գախարիայի հիմնած «Հանուն Վրաստանի» կուսակցության անդամներ են գրանցվել խորհրդարանի պատգամավորներ Գիորգի Խոջեվանիշվիլին, Աննա Բուչուկուրին, Միխեիլ Դաուշվիլին, Ալեքսանդր Մոծերելիան, Բեքա Լիլուաշվիլին, կառավարության աշխատակազմի նախկին ղեկավարներ Նաթիա Մեզվրիշվիլին եւ Կախաբեր Քեմուկիձեն, Սցխեթա-Սթի-



անթիի նախկին նահանգապետ Բերդիա Սիճինավան, ուրիշներ:

ՄԻՄՈՆ ԿԻԼԻԱԶԵ

ՎԱՐՂԱՏՈՆ - 2021

«ՎԱՐՂԱՏՈՆ» ՆՈՐԻՑ ԶԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ճապարհին միավորելով հայ, վրացի ու այլազգի արհեստավորների, մտավորականների, խոսք ու երգի Վարդապետի սիրահարների... Աշուղ-բանաստեղծի շիրմի մոտ այդ օրը խոնարհվեցին հարյուրավոր կարմիր վարդեր՝ հիմք դնելով Սայաթ-Նովյան Վարդատոնին:

107 տարի անց, մայիսի 30-ին, Վիրահայոց թեմի «Յուրիանե» թանգարանում տուն» կենտրոնի եւ «Վրաստան» թերթի նախաձեռնությամբ Թբիլիսիի մի խումբ մտավորականներ՝ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամներ Վալերի Գրիգորյանը, Արտեմ Կիրակոզովը, Ռոզա Զոհրաբյանը, Միքայել Անանովը, Գարրի Ղալանթարովը, բանաստեղծ, լրագրող Լեւոն Յալուղելաշվիլին, «Յուրիանե» թանգարանի տնօրեն Կենտրոնի ղեկավար Գիսանե Գրիգորյանը եւ կենտրոնի աշխատակցուհի, լրագրող Գոհար Մազմանյանը, Վրաստանում Զայաստանի դեսպանության դիվանագետներ Զարուհյուն Զայրապետյանը եւ Լեւոն Զարգարյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրուրյանը,

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Յայրատուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը, «Միասին» կազմակերպության ղեկավար Լեւոն Զիդիլյանը, Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախագահ Սուսաննա Խաչատրյանը, «Ալիք մեդիա» լրատվական գործակալության

նկարչուհի Մարինա Խաչատրյանը եւ թարգմանչուհի Մարինա Թորոսյանը կարմիր վարդերը ձեռքներին թունամյանի տանից ուղղվեցին Մեյրանում Սայաթ-Նովյայի հուշարձան, որից հետո Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցու մուտքի կողքին



տնօրեն Լիզա Թորոսյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Զեմրիխ Մուրադյանը, «Վրացահայերի միության» նախագահ Մարի Առաքելովան, Վիրահայոց թեմի եկեղեցասեր կանանց միության նախագահ Աիդա Զախոյան-Ութմազյանը,

Այդ օրը Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսատեսությամբ, տոնական պատարագ մատուցեց Քվեմո Քարթլիի հոգեւոր հովիվ Զավեն վարդապետ Յազիջյանը: Քարդի իր խոսքում Զայր Սուրբը կարեւորեց



գտնվող Սիրո երգչի շիրմին, ուր երկար տարիներ ծառայել էր Սայաթ-Նովյան եւ որտեղ պարսից թրից սպանվել: րեց Վարդատոնի նշանակությունը՝ որպես բազմազգ ու բազմակրոն քաղաքի բարեկամության, սիրո եւ փոխադարձ հարգանքի խորհրդանիշ: Սայաթ-Նովյայի շիրմի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ, որին հաջորդեցին ներկաների՝ Սայաթ-Նովյայի ուղղված սրտի ու սիրո, նվիրումի ու մեծարումի, հպարտության ու գնահատանքի խոսքերը: Ինչպես, այս էլ թե՛ «...ուրիշ գարուններով, ուրիշ վարդերով, ուրիշ բաղերով ու բլբուլներով...», բայց Վարդատոնը նշվեց ու շարունակվելու է նշվել, նախեստաջ այն պարզ պատճառով, որ Սայաթ-Նովյան բարի ու ճշմարիտի քարոզիչ է, իսկ իր իսկ խոսքերով՝ «կրակ էլ տաս, ճշմարիտին մահ չըկա»... **ՊԱՅՄԱՆ ԲՈՒՍԱՆՑԱՆ**

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ»



ԵՎ ԱՅՎ ԵՎՎ ԾՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՆՈՐ ԵՐԱՋԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՊԱՐԸ

Ինչպես նախորդ, նույնպես եւ այս՝ 2021-22 ուսումնական տարում, ավանդական «Վերջին զանգի» տոնը Վրաստանի բոլոր դպրոցներում անցկացվեց կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումների պայմաններում: Զամավարակի սեղմ ու հավաք մթնոլորտը, սակայն, չխանգեցրեց՝ դպրոցին հրաժեշտ տվող շրջանավարտների համար այդ ավանդական կարեւոր իրադարձության խորհուրդը՝ կյանքի նոր սկիզբ սկսելու գիտակցումը:

ԹԻՎ 104-Ի 24 ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ ԶՈՐՍԸ՝ ՍԿԵ ՄԵՐԱՆԱԿՆԵՐ

«Վերջին զանգի» միջոցառումը Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի 24 շրջանավարտներն անցկացրեցին իրենց դասարանում: Այնքան սպասված ավանդական տոնը ուրախության հետ նաեւ տխրություն էր բերել: Այդ օրը վերջակետ էր դնում երկար տարիներ միասին անցկացրած ուսումնական մարաթոնին՝ դասերի, դասամիջոցների, գրավոր եւ տնային աշխատանքների հաջորդականումը... Բայց պետք էր հանակերպվել ու աներկյուղ դիմավորել կյանքի նոր մարտահրավերը: Այդ մասին էին կրթօջախի տնօրինության եւ ուսուցիչների սիրելի սաներին հղված շնորհավորական խոսքն ու բարեմաղթանքները: Դիմելով հուզված շրջանավարտներին՝ դպրոցի տնօրեն Իրինա ժամկոչյանն ասաց. - Չնայած հեռավար ուսուցումով ստեղծված պայմանականություններին՝ դուք հաղթանակած ավարտեցիք դպրոցը: Զպարտ ենք, որ ունենք չորս ոսկե մեդալի թեկնածուներ: Մաղթում են ձեզ հաջողություն՝ կյանքի նոր արահետներում: Զավատում են, որ կարդարացնեք մեր հույսերը, կդառնաք Վրաստանի արժանավոր քաղաքացիներ եւ համոզված են, որ ձեզանց շատերը կվերադառնան հարազատ դպրոց՝ որպես մանկավարժներ ու ձեր դպրոց կբերեք ձե՛ր գավակներին...:

ԲԱՐԻ ԵՐԹ 103-Ի ԾՐՋԱՆԱՎԱՐՏ

Թբիլիսիի թիվ 103 վրաց-հայկական դպրոցի հայկական բաժնում այս տարի կրթօջախին հրաժեշտ տվեցին 14 շրջանավարտներ: Պահպանելով համավարակի պահանջները՝ «Վերջին զանգի» արարողությունը տեղի ունեցավ դպրոցի բակում: Տնօրեն Արչիլ Զխաիձեի հետ մեկտեղ՝ ավանդույթին մասնակցեցին ուսուցիչներ, ծնողներ: Իհարկե, այս տարի միջոցառումն անցավ առանց գեղարվեստական մասի, բայց շրջանավարտներն անմասն չմնացին շնորհավորանքներից: Կրթօջախի հայկական բաժնի ուսանավար Զասմիկ Պապիկյանը տոնի առիթով եւս ողջունեց ու շնորհակալություն հայտնեց մանկավարժներին եւ ծնողներին՝ դժվարին պայմաններում հանդես բերած բարեխիղճ ու քրտնաջան աշխատանքի եւ համբերատարության համար, ապա դիմեց շրջանավարտներին. - Հույսով են, - ասաց նա, - դուք ձեր նոր կյանքի անխուսափելի դժվարությունները կհաղթահարեք նույն հաջողությամբ, ինչպես հաղթահարեցիք ձեզ բաժին ընկած հեռավար ուսուցման փորձությունները: Թող իրականացան ձեր բոլոր երազանքներն ու իղծերը: Ձեզ բարի եթե:

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ԽՈՒՐՈՒՆԻ ԶԱՆԳՆԵՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Մայիսի 20-ին, Մառնեուլիի մունիցիպալիտետի Խոստոնի գյուղի հանրային դպրոցում հնչեց ավանդական «Վերջին զանգը»: Հինգ շրջանավարտ թողարկեց դպրոց

ԳՐ 2021-22 ՈՍՏԱՐՈՒՄ:

Երկար ու ծիգ թվացող 12 տարիները դրվագ առ դրվագ անցան նրանց՝ Մանե Սիրադեղյանի, Արտակ Զախվերդյանի, Նոննա Գրիգորյանի, Էթերի Գասպարյանի եւ Գնել Դավթյանի աչքերի առջև՝ առաջին դաս, առաջին դասվար, սիրելի ուսուցիչներ եւ դպրոցական անհոգ կյանքի այլես անդարձ օրերի հուշեր... Դպրոցի ուսուցիչները երջանիկ ու հետաքրքիր կյանք մաղթեցինք սիրելի շրջանավարտներին: Իսկ դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի Լալի Մարգիանին՝ անակնկալ մատուցեց նրանց: Նա դպրոցին հրաժեշտ տվող սաներին նվիրեց իր ձեռքով կարած ու իր բարեմաղթանքներով «գարդարված» գոգնոցներ ու վերնաշապիկներ:

ՌՈՒՍԱ ՂԱՐԻՔԱՆ ԽՈՒՐՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ ԿԱՆՐԱԿԻՆ ԴԱՊՐՈՑԻ ՄԱՌՆԵՆՈՒԼԻ ԴՆՈՒՆԻՑԻՎԱԿԻՄԵՆՏ

ԱԽԱՆՔԱԼԱՔԻ 3 ԶԱՆԳՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԶՆՉԵՑ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ»

Ախալքալաքիում գործող հայկական երեք դպրոցներում եւս հնչեց Վերջին զանգը: Երկրում կորոնավիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումներից ելնելով, այս տարի նույնպես ամենամյա հանդիսույթն անցավ համեստ պայմաններում: Ախալքալաքիի թիվ 1 հանրային դպրոցն ավարտեց 33 շրջանավարտ, որոնցից 3-ը՝ ոսկե, 2-ը՝ արծաթե մեդալներով: Թիվ 5 դպրոցում այս տարի 12 շրջանավարտ է: Նշենք, որ Դ.Դեմիրճյանի անվան թիվ 4 դպրոցում միջնակարգն ավարտեց 43 շրջանավարտ:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆՂ, ԾՐՋԱՆԱՎԱՐՏ

Այս տարվա ավարտական «Վերջին զանգը»՝ Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահունյան գյուղի թիվ 3 հանրային դպրոցում սոսկ հրաժեշտի զանգ չէր, այն հասունության ավետում էր՝ երազանքների իրականացման ճանապարհի տանող ուղի: Այդ մասին էր տնօրենի եւ կրթօջախի ուսուցչական կազմի սաներին հղված խոսքը: Ինչպես խոստովանեցին իրենք՝ կրթօջախի 7 շրջանավարտներից 3-ը պատրաստվում են ուսուցող շարունակել Թբիլիսիի բուհերում, իսկ մյուսները՝ քոլեջում՝ նախընտրած մասնագիտության նրբությունների մեջ հմտանալու եւ ազնիվ մարդ ու քաղաքացի լինելու պատրաստակամությամբ ու հավատով: Շահունյանից շրջանավարտները լուսավոր ձգտումներով ու հույսերով են բացում դռները դեպի ապագան: **ՄԻՂԱ ԱԶՍԱՆ**

Շահունյանի թիվ 3 հանրային դպրոցի տնօրեն

ԲԱՐԻՆ ԶԵՋ ԴԵՏ, ՄԵՐ ՄԻՐԵԼԻ ՏՂԱՆԵՐ ՈՒ ԱՐՋԻՎՆԵՐ «Վերջին զանգ»: Դպրոցական կյանքի ամենասիրտարագիրը պատրաստեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱՆՅԱՆԸ

ՎԻՃԱԿԻՆ ԴՆՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄ

Վիճակից մեկը, որին անհամբերությամբ ու երկյուղածությամբ միշտ են սպասում ինչպես շրջանավարտները, այնպես էլ՝ ուսուցիչները, ծնողները, ընդհանրապես գյուղը: Կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների պայմաններում՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Զեչտիա գյուղի՝ Վիկտոր Գրիգորյանի անվան թիվ 1 հանրային դպրոցում 12-րդ դասարանի «Վերջին զանգը» անցկացվեց նեղ շրջանակներում: Ներկա էին միայն շրջանավարտները, դասղեկը, տնօրենը եւ պարապող ուսուցիչները:

Այս ուստարվա մեր 10-ը շրջանավարտներն արտասովոր հուզմունքով դիմավորեցին՝ դպրոցին հրաժեշտ տալու ավանդական արարողությունը: Եվ դա հասկանալի էր. այսուհետ նրանք ընդմիշտ թռչելու են իրենց հարազատ «բույնից» դեպի մեծ աշխարհ:

Ջերմ ու հուզիչ մթնոլորտում տնօրենը եւ մանկավարժներն իրենց մաղթանքներն ու շնորհավորանքները հղեցին ավարտողներին: Դա այն հազվադեպ իրադարձություններից էր, երբ հրաժեշտի տխրությունը շաղախվել էր ակտիվ կյանք մտնելու ուրախության հետ, երբ նվիրական հիշողությունների թախիծը միախառնվել էր՝ կյանքի առաջին լուրջ փուլը հաղթահարելու եւ նոր մեկնարկ սկսելու իրողության սպասումին:

Շրջանավարտներն իրենց հերթին հրաժեշտի խոսքեր ասացին եւ խորին շնորհակալություն հայտնեցին մանկավարժներին՝ նրանցից ստացած գիտելիքների ու կյանքի դասերի համար:

ՆԱՆԵ ԶՈՒՍԵՓՅԱՆ Զեչտիայի՝ Վ.Գրիգորյանի անվան թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն

ԶՐԱԺԵՏԻ ՂՈՂԱՆՋՆԵՐ

Վրաստանի պետական անկախության վերականգնման օրը՝ մայիսի 26-ին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Արագայս գյուղի հանրային դպրոցի 9 շրջանավարտները՝ Արտաշես Աղջոյանը, Մովսես Պապոյանը, Վաչագան Դալիբալայանը, Պերճուհի Եղոյանը, Ռոզա Մկոյանը, Աքսաննա Սանոսյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Շալիկո Զազրյանը, Արարատ Զակոբյանը վերջին անգամ ներկայացան դպրոց՝ սիրելի տնօրեն եւ միաժամանակ դասղեկ Մանյա Պողոսյանի հետ:

Ուսուցիչներից սիրո եւ երախտագիտության խոսք ուղղեցին շրջանավարտներին Արաքսի Կոնյանը, Զասմիկ Եղոյանը, Գրիգորյան Ծառուկյանը եւ Փոքր Արագայի հանրային դպրոցի տնօրեն Մելանյա Վարդանյանը: Երկա՛ր, հանդիսավոր հնչում է «Վերջին զանգը»: Հուզմունքն ալիքվում է, խորանում:

Դժվար է բաժանվել հարազատ դարձած դպրոցից: Մանյա Պողոսյանը հուզմունքով բարի ճանապարհ է մարդուն սիրելի սաներին. - Գերազանց ուսումն ու վարքը դեռ բավական չեն ժամանակակից աշակերտի համար, դուք այժմվանից պետք է մտածեք ձեր ապագա մասնագիտության մասին: Ընտրելով օգտակար մասնագիտություն՝ դուք կարող եք ձեր ավանդը ներդնել հայրենիքի բարգավաճման գործում, - ասաց նա:

ԿՈՐՅՈՒՆ ԲԱՍԵՆՑԱՆ Փոքր Արագայի հանրային դպրոցի ուսուցիչ

ՎԻՃԱԿԻՆ ԴՆՈՒՆԵՐԻ ԳՆՈՒՄ

Վիճակից մեկը, որին անհամբերությամբ ու երկյուղածությամբ միշտ են սպասում ինչպես շրջանավարտները, այնպես էլ՝ ուսուցիչները, ծնողները, ընդհանրապես գյուղը: Կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների պայմաններում՝ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Զեչտիա գյուղի՝ Վիկտոր Գրիգորյանի անվան թիվ 1 հանրային դպրոցում 12-րդ դասարանի «Վերջին զանգը» անցկացվեց նեղ շրջանակներում: Ներկա էին միայն շրջանավարտները, դասղեկը, տնօրենը եւ պարապող ուսուցիչները:

Այս ուստարվա մեր 10-ը շրջանավարտներն արտասովոր հուզմունքով դիմավորեցին՝ դպրոցին հրաժեշտ տալու ավանդական արարողությունը: Եվ դա հասկանալի էր. այսուհետ նրանք ընդմիշտ թռչելու են իրենց հարազատ «բույնից» դեպի մեծ աշխարհ:

Ջերմ ու հուզիչ մթնոլորտում տնօրենը եւ մանկավարժներն իրենց մաղթանքներն ու շնորհավորանքները հղեցին ավարտողներին: Դա այն հազվադեպ իրադարձություններից էր, երբ հրաժեշտի տխրությունը շաղախվել էր ակտիվ կյանք մտնելու ուրախության հետ, երբ նվիրական հիշողությունների թախիծը միախառնվել էր՝ կյանքի առաջին լուրջ փուլը հաղթահարելու եւ նոր մեկնարկ սկսելու իրողության սպասումին:

Շրջանավարտներն իրենց հերթին հրաժեշտի խոսքեր ասացին եւ խորին շնորհակալություն հայտնեցին մանկավարժներին՝ նրանցից ստացած գիտելիքների ու կյանքի դասերի համար:

ՆԱՆԵ ԶՈՒՍԵՓՅԱՆ Զեչտիայի՝ Վ.Գրիգորյանի անվան թիվ 1 հանրային դպրոցի տնօրեն

ԶՐԱԺԵՏԻ ՂՈՂԱՆՋՆԵՐ

Վրաստանի պետական անկախության վերականգնման օրը՝ մայիսի 26-ին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մեծ Արագայս գյուղի հանրային դպրոցի 9 շրջանավարտները՝ Արտաշես Աղջոյանը, Մովսես Պապոյանը, Վաչագան Դալիբալայանը, Պերճուհի Եղոյանը, Ռոզա Մկոյանը, Աքսաննա Սանոսյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Շալիկո Զազրյանը, Արարատ Զակոբյանը վերջին անգամ ներկայացան դպրոց՝ սիրելի տնօրեն եւ միաժամանակ դասղեկ Մանյա Պողոսյանի հետ:

Ուսուցիչներից սիրո եւ երախտագիտության խոսք ուղղեցին շրջանավարտներին Արաքսի Կոնյանը, Զասմիկ Եղոյանը, Գրիգորյան Ծառուկյանը եւ Փոքր Արագայի հանրային դպրոցի տնօրեն Մելանյա Վարդանյանը: Երկա՛ր, հանդիսավոր հնչում է «Վերջին զանգը»: Հուզմունքն ալիքվում է, խորանում:

Դժվար է բաժանվել հարազատ դարձած դպրոցից: Մանյա Պողոսյանը հուզմունքով բարի ճանապարհ է մարդուն սիրելի սաներին. - Գերազանց ուսումն ու վարքը դեռ բավական չեն ժամանակակից աշակերտի համար, դուք այժմվանից պետք է մտածեք ձեր ապագա մասնագիտության մասին: Ընտրելով օգտակար մասնագիտություն՝ դուք կարող եք ձեր ավանդը ներդնել հայրենիքի բարգավաճման գործում, - ասաց նա:

ԿՈՐՅՈՒՆ ԲԱՍԵՆՑԱՆ Փոքր Արագայի հանրային դպրոցի ուսուցիչ